Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2023թ. նոյեմբերի 23-ի թիվ 4 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝ Սրբուհի Գևորգյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (այսուհետև՝ Համալսարան) իրականացնում է դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում, որը իրենից ներկայացնում է լրացուցիչ հանրակրթական ծրագիր՝ 11-րդ և 12-րդ դասարանների սովորողների, քոլեջների, ուսումնարանների ուսանողների համար՝ առանց իրենց հիմնական ուսումնական հաստատություններում ուսումնական պարապմունքներից բացակայելու, ինչպես նաև բուհեր չընդունված դիմորդների համար: Հիմնական նպատակը ունկնդիրներին Համալսարանի ընդունելությանը նախապատրաստելն է:

Համալսարանի նախապատրաստական կրթության դասընթացները կազմակերպում և համակարգում է դիմորդների ներգրավման բաժինը:

2. Նախապատրաստական կրթության դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր-մայիս (դիմորդների հիմնական ուսումնական պարապմունքների ավարտից հետո): Նախապատրաստական կրթության դասընթացների ուսման վարձը սահմանում է Համալսարանի գիտական խորհուրդը:

3. Նախապատրաստական կրթության դասընթացները ունկնդիրների համար կազմակերպվում են (պարտադիր մրցութային առարկաների ուսուցման տևողությունը)՝

- 12-րդ դասարանցիների, ինչպես նաև բուհ չընդունված դիմորդների համար՝ 1 տարի (առնվազն 2 առարկա, մեկ առարկայի արժեքը՝ տարեկան 150.000 դրամ):
- 11-րդ դասարանցիների համար՝ 2 տարի (ընտրովի՝ 1-3 առարկա, մեկ առարկայի արժեքը՝ տարեկան 150.000 դրամ):

4. Դիմումներն ընդունվում են մինչև դասընթացները սկսվելը, ինչպես նաև առանձին դեպքերում նաև դասընթացների ընթացքում:

5. Նախապատրաստական կրթության դասընթացներում ուսուցումն իրականացվում է տեսական (դասախոսությունների), գործնական պարապմունքների և խորհրդատվությունների ձևով:

Դասընթացներն անցկացվում են երեք եղանակով՝

-առերես,

-հեռավար

-հիբրիդային:

Առերես եղանակով դասընթացներին կարող են մասնակցել Երևանում և մոտակա քաղաքներում և գյուղերում բնակվող դիմորդները, իսկ մյուսների համար նախատեսված է հեռավար կամ հիբրիդային ուսուցման եղանակը (այդ թվում նաև ԱՊՀ երկրների դիմորդների համար):

6. Ուսումնական գործընթացում ունկնդիրների գիտելիքները վերահսկելու համար կիրառվում են հետևյալ ձևերը՝ ընթացիկ ստուգումներ ուսման ընթացքում և ավարտական քննություններ:

7. Ունկնդիրների գիտելիքներն ստուգվում և գնահատվում են 20 միավորանոց սանդղակով:

8. Համալսարանի և ունկնդիրների (ներկայացուցիչներ) հարաբերությունները կարգավորվում է երկկողմ համաձայնությամբ՝ հաստատության և ծնողի, օրինական ներկայացուցչի, կազմակերպության (այսուհետ՝ պատվիրատու) միջև երկու հավասարազոր օրինակից կնքվող պայմանագրի հիման վրա, որի ձևը հաստատում է Համալսարանը:

9. Կնքված պայմանագիրը Համալսարանը միակողմանի լուծում է, եթե կողմերից մեկը խախտել են Համալսարանի ներքին կարգապահական կանոնները և պայմանագրի դրույթները: Նշված պայմանագիրը կարող է նաև լուծվել ունկնդրի նախաձեռնությամբ՝ Համալսարանի ռեկտորին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով: Պայմանագրով կարող են սահմանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված լուծման այլ հիմքեր:

10. Նախապատրաստական կրթության դասընթացների ունկնդիրներն իրավունք ունեն՝

1) ստանալ որակյալ կրթություն՝ ընտրված առարկայացանկին համաձայն,

2) օգտվել համալսարանի նյութատեխնիկական բազայի ընձեռած հնարավորություններից:

11. Նախապատրաստական կրթության դասընթացների ունկնդիրները պարտավոր են՝

1) սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

2) սահմանված ժամկետներում կատարել բոլոր այն առաջադրանքները, որոնք նախատեսված են առարկայական ծրագրերով,

3) պահպանել համալսարանի կարգապահական կանոնները:

12. Նախապատրաստական կրթության դասընթացները վարում են Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները (առանձին դեպքերում նաև հրավիրված մասնագետները): Նախատեսված լսարանային ժամերը հաշվառվում են ամբիոնի ուսումնական բեռնվածություններում կամ իրականացվում ժամավճարային այլ հիմունքներով:

13. Նախապատրաստական կրթության դասընթացների բովանդակությունն ու որակը ապահովելու նպատակով, ըստ հանրակրթական առարկաների, յուրաքանչյուր ուսումնական տարի ձևավորվում է փորձագիտական խորհուրդ, որը հրամանագրվում է Համալսարանի ռեկտորի կողմից՝ սահմանելով վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները: Նշված փորձագիտական խորհրդի անդամների թեկնածուներին առաջադրում է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորը՝ դիմորդների հավաքագրման բաժնի հետ համատեղ:

14. Նախապատրաստական կրթության դասընթացների ավարտական քննություններից դրական գնահատականներ ստացած ունկնդիրներին տրվում է **ՀՊՄՀ Նախապատրաստական կրթության հավաստագիր**:

15. Նախապատրաստական կրթության դասընթացների առերես, հեռավար կամ հիբրիդային ուսուցումն անցած ունկնդիրները դասընթացների ավարտական քննությունների դրական արդյունքների հիման վրա հրամանագրվում են որպես Համալսարանի առաջին կուրսի ուսանողներ վճարովի (ուսուցման վարձավճարով) առկա և հեռակա ձևերում (համաձայն դիմորդի դիմումի)՝ անկախ պետական միասնական և ներքին քննությունների արդյունքներից, ըստ մասնագիտությունների նախարարության հաստատած տեղերի մինչև 40 տոկոսի չափով: Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար իրականացվում է մրցույթ նախապատրաստական կրթության դասընթացների ավարտական քննությունների արդյունքներով այն դեպքում, երբ ՀՀ ԿԳՄՍ ԳԹԿ-ի կողմից իրականացված ընդունելության միասնական, ինչպես նաև այլ (ներքին) քննությունների արդյունքներով մրցույթից հետո առկա են թափուր տեղեր: Ավարտական քննություններում 20 միավորանոց սանդղակով դրական են համարվում 7.5 և բարձր միավորները:

16. Նախապատրաստական կրթության դասընթացների ավարտական քննությունների վերահանձնում չի թույլատրվում՝ բացառությամբ հիվանդության պատճառով քննության չներկայանալու դեպքերի՝ համապատասխան տեղեկանք քննության օրը նրա ներկայացուցչի կողմից ներկայացնելու դեպքում:

17. Նախապատրաստական կրթության դասընթացների ունկնդիրը, եթե մասնակցում է բուհ ընդունվելու համար միասնական քննություններին, ապա կորցնում է նախապատրաստական դասընթացների ավարտական քննությունների դրական արդյունքներով Համալսարանի առաջին կուրսում որպես ուսանող հրամանագրվելու (ընդունվելու) իրավունքը:

18. Նախապատրաստական կրթության դասընթացներին ընդգրկվելու համար, անհրաժեշտ է, որ դիմորդները, յուրաքանչյուր տարի սահմանված ժամկետներում info@aspu.am էլ. փոստի հասցեին ուղարկեն հետևյալ **փաստաթղթերն** էլեկտրոնային ձևաչափով (թղթային տեսքով փաստաթղթերի սկանավորած կամ ֆոտոնկարահանած տարբերակները)՝

1. Դիմում հայտ (կցված է)

2. Բանկային փոխանցման կտրոնը, կանխավճար՝ ուսման վարձի 10%-ի չափով (հաշվեհամարով)
3. Անձնագիրը կամ ծննդյան վկայականը
4. Զինկոմիսարիատից կցագրման վկայականը (տղաների համար)
5. Ծնողներից մեկի անձնագիրը՝ պայմանագրի կնքման համար,
6. Վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիրը (կցված է)
7. 6 լուսանկար (3x4)
8. Դպրոցն ավարտածների համար ատեստատը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

*Նախապատրաստական կրթության դասընթացները իրականացվում են ՀՀ կառավարության կողմից հաստատված Համալսարանի ընդունելության մասնագիտությունների (կրթական ծրագրերի) համար սահմանված մրցութային քննական առարկաներից՝

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը, Կրթական ծրագիրը	Քննական առարկաները		
		Մրցութային		Ոչ մրցութային
1	2	3	4	5
011201.00.6	Նախադպրոցական մանկավարժություն			
011201.01.6	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտլ(գ)	
011301.00.6	Ընդհանուր մանկավարժություն			
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտլ(գ)	
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտլ(գ)	
011302.00.6	Հատուկ մանկավարժություն			
011302.05.6	Հատուկ մանկավարժություն	Հլգ(գ)	Կ(գ)	
031301.02.6	Էրգոթերապիա	Հլգ(գ)	Կ(գ)	
011302.04.6	Լոգոպեդիա	Հլգ(գ)	Կ(գ)	
011401.00.6	Մասնագիտական մանկավարժություն			
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Օտլ(գ)	
011401.04.6	Ֆիզիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ(գ)*
011401.12.6	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	Հլգ(գ)	Մ(գ)	
011401.05.6	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ(գ)*
011401.06.6	Ինֆորմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ(գ)*
011401.02.6	Քիմիա	Ք(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)	Հլգ(գ)*
011401.01.6	Կենսաբանություն	Կ(գ)	Ք(գ) կամ Ֆ(գ)	Հլգ(գ)*
011401.03.6	Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ) կամ Ֆ(գ)	Հլգ(գ)*
011401.18.6	Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)	
011401.11.6	Կերպարվեստ	Գծն	Գն	Հլգ(գ)*
011401.13.6	Երաժշտական կրթություն	ԵՏՍ(գ,բ	ՆԵՍԿ և երգ	Հլգ(գ)*

		)		
011401.14.6	Պարարվեստ	Դպար	ՀԺ կամ ԺՊՄ	Հլգ(գ)*
011401.20.6	Ռուսաց և գրականություն	Ռլգ(գ)	Հլգ(գ)	
011401.21.6	Անգլերեն և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)	
011401.22.6	Գերմաներեն և գրականություն	Հլգ(գ)	Գլ(գ) կամ Անգլ(գ)	
011401.30.6	Մաթեմատիկա-ֆիզիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ(գ)*
011401.31.6	Մաթեմատիկա-ինֆորմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)	Հլգ(գ)*
011401.32.6	Կենսաբանություն-քիմիա	Ք(գ)	Կ(գ)	Հլգ(գ)*
011401.33.6	Աշխարհագրություն-բնագիտություն	Ա(գ)	Մ(գ) կամ Ֆ(գ)	Հլգ(գ)*
011401.08.6	Հասարակագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)	
021101.00.6	Տեսալսողական արվեստ			
021101.01.6	Գեղարվեստական լուսանկարչություն	ԳԼՀ(բ)	ՄՀ(բ)	Հլգ(գ)*
021101.02.6	Օպերատորություն	ՕՊՀ(բ)	ՄՀ(բ)	Հլգ(գ)*
021201.00.6	Դիզայն			
021201.03.6	Հագուստի մոդելավորում	ԳԾն	Կոմպ	Հլգ(գ)*
021401.00.6	Կիրառական արվեստ			
021401.01.6	Դեկորատիվ կիրառական արվեստ	ԳԾն	Կոմպ	Հլգ(գ)*
021502.00.6	Կատարողական արվեստ			
021502.01.6	Գործիքային կատարողականություն	ՄԳԴ(բ)	ՍԵՏ(բ)	Հլգ(գ)*
021503.00.6	Թատերական արվեստ			
021503.02.6	Ռեժիսուրա	Դվ	Ռեժ	Հլգ(գ)*
021801.00.6	Արվեստի տեսություն և պատմություն			
021801.01.6	Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում	ԸԱՊ(բ)	ԱՏ(գ)	Հլգ(գ)*
023102.00.6	Օտար լեզու և գրականություն			
023102.05.6	Իսպաներեն և գրականություն	Հլգ(գ)	Իսլ(գ) կամ Անգլ(գ)	
031301.00.6	Հոգեբանություն			
031301.01.6	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)	
031401.00.6	Սոցիոլոգիա			
031401.01.6	Սոցիոլոգիա	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)	Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*

031501.00.6	Մշակութաբանություն			
031501.01.6	Մշակութաբանություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)	
031501.02.6	Թանգարանային գործ և պատմամշակութային կառույցների պահպանություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)	
032101.00.6	Լրագրություն			
032101.01.6	Լրագրություն	Հլգ(գ)	Օտլ(գ)	
032201.00.6	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ			
032201.01.6	Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)	
052101.00.6	Շրջակա միջավայրի գիտություններ			
052101.01.6	Շրջակա միջավայրի գիտություններ	Ք(գ)	Ֆ(գ) կամ Կ(գ)	Հլգ(գ)*
041301.00.6	Կառավարում			
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)	Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
092301.00.6	Սոցիալական աշխատանք			
092301.01.6	Սոցիալական աշխատանք	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)	

Հեռ.՝
E-mail:
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

* Նշված ոչ մրցութային գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական այլ փաստաթղթից